Նկատի ունենալով դրանց գրական–պատմական կարեւոր նշանակութիւնը, մենք այստեղ ամբողջապէս առաջ կը բերենք այն հատուածները, որ վերաբերում են Աբովեանի կեանքին: Եւ առհասարակ կը ջանանք լրիւ կերպով ամփոփել այն ամէնը Վագներից, ինչ հայ կեանքի զարգացման պատմութեան համար որպէս նիւթ մնայուն արժէք ունի, մեր կարծիքով:

Թէ Մորից Վագներ ինքը ո՛րչափ մեծ կարեւորութիւն է տալիս իր՝ Հայաստան ճամբորդութեանը, երեւում է նրա «Ուղեւորութիւն դէպի Արարատ» աշխատութեան յառաջաբանից արդէն, որ նա այսպէս է ասում.

«Դէպի Ասիա կատարած իմ երեքամեայ թափառումների եւ Արեւելքում անցրած կեանքիս մէջ՝ դէպի Հայաստան կատարած ճամբորդութիւնից ամենասիրելի յիշողութիւններն եմ պահել ես, որպէս արդիւնք իմ ունեցած ապրումների եւ ձեռք բերած ծանօթութիւնների»:

Իրաւունք ունէր գիտնական ճամբորդը չեշտելու, թէ ա՛յն միջոցին, երբ նոր ժամանակների մեծագոյն աշխարհագրագէտ Կարլ Ռիտտէր իր բազմահատոր Աշխարհագրութեան 10–րդ գիրքն էր (Առաջաւոր Ասիա, Հայաստան եւայլն) տպագրութեան յանձնում, օգտագործելով բոլոր ականաւոր ճամբորդների տեղեկութիւնները, նոյն այդ միջոցին մեր հայրենիքը մեծ մասով դեռ մի terra incognita (անծանօթ երկիր) էր եւրոպացի գիտնականների համար:

Եւ սակայն, Հայաստանը գրաւիչ է, ասում է Վագներ, ոչ միայն աշխարհագրագէտի եւ բնախոյզի, այլ եւ ամէնքի համար: Նկարիչն եւս այնտեղ վայելքի ու ոգեւորութեան անսպառ աղբիւր գտնել կարող է:

Այսպէս, «Էրզրումից ընդամէնը մի քանի մղոն դէպի հարաւ՝ ճամբորդը Թորքում ջրի հովտում կը հանդիպի մի ջրվէժի, որ իր վեհ գեղեցկութեամբ նմանը չունի Եւրոպայում: Նրան գերազանցել կարող է թերեւս միայն Նիագարան: Եւ սակայն այդ ջրվէժի մասին մէկ տող իսկ յիշատակութիւն չէք գտնի ոեւէ գրքում»:

Մ. Վագներ ապա յիշատակում է մի շարք հեղինակներ, որոնք դրանից յետոյ ճամբորդել եւ նկարագրել են փոքր–ասիական երկիրները, առաւելապէս՝ անգլիացիք: «Գերման ճամբորդներից թւում է թէ հնագէտ Շուլց միակն է եղել, որի թողած գրուածքների շնորհիւ զգալապէս հարստանում է Հայաստանի ներքին մասերի աշխարհագրութիւնը»:

Վագների սկզբնական յատուկ նպատակն է եղել՝ 1843–ին այցելելով ռուս. Հայաստանը՝ բարձրանալ Արարատ սարը: Յաջորդ տարին նա Տաճկա–Հայաստան ու Պարսկաստան եւս գնում է: Ակոռի գիւղի (Մասիսի լանջին) կործանման (1840) լուրը առնելով՝ Վագների հետաքրքրութիւնը է՛լ աւելի շարժւում է դէպի Հայաստան եւ Արարատ, ուր եւ նա լինում է երկու անգամ (յոլը. IX): Այդ կապակցութեան մէջ նա յիշում է գերման ծանօթ երկրաբան եւ Հայաստան ճամբորդած ու նրա երկրաբանութիւնը ուսումնասիրած Աբիխին:

* * *

Հայաստան ճամբորդութեան համար Վագներ նախապատրաստութիւններ է տեսնում Թիֆլիսում:

Այդ բանում նրան անհրաժեշտ աջակցութիւնն է ցոյց տալիս զօրավար Նայդհարդտ, որ այդ ժամանակ կովկասեան բանակի հրամանատարն էր: Նա այդ իմաստով հրահանգներ է տալիս պաշտօնեայ Կոցուբէյին: Վերջինս Վագների տրամադրութեան տակ է դնում Կովկասի կառավարչապետի դիւանից (արխիւ) «մի քանի թանգագին ձեռագիրներ Հայաստանի մասին», որ եւ մեր ճամբորդը իր մեկնումից առաջ կարդում է մեծ հետաքրքրութեամբ:

«Նոյնպիսի մեծ արժէք ունէր ինձ համար», շարունակում է Վ. «իմ ծանօթութիւնը պարոն Աբովեանի հետ, որ գերման հոգու տէր հայ է, եւ որը Լիֆլանտիայի գերմանացոց մէջ ձեռք է բերել գերման հիմնական կրթութիւն» (էջ 2):

Արժէ այստեղ մէջ բերել խաչատուր Աբովեանին վերաբերող ամբողջ հատուածը, որ անմիջապէս հետեւում է վերոյիշեալ տողերին:

«Այս մարդու (Խ. Աբովեանի) ճակատագիրը խիստ հետաքրքրական է: Նա իր կրթու–